«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 49/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 11.09.2019թ. ժամը 15:10

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 16.08.2019թ-ին քաղաքացի Վարդան Սուքիասյանից ստացված դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Նադեժդա Պարոնյանի սնանկության գործով կառավարիչ՝Ժիրայր Արաբյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Սեպտեմբերի 09-ին,15-00-ին՝ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում,հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ քաղաքացի Վարդան Սուքիասյանը:
Քաղաքացի Նադեժդա Պարոնյանի սնանկության գործով կառավարիչ՝Ժիրայր Արաբյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Քաղաքացի Նադեժդա Պարոնյանի սնանկության գործով կառավարիչ՝Ժիրայր Արաբյանը
Դիմումատու քաղաքացի Վարդան Սուքիասյանը:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1.16.08.2019թ-ին քաղաքացի Վարդան Սուքիասյանից ստացված դիմում բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Նադեժդա Պարոնյանի սնանկության գործով կառավարիչ՝Ժիրայր Արաբյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և ստուգեց մասնակիցների ինքնությունը: Համաձայն կարգի դիմում բողոքը հակիրճ ներկայացնելու համար ձայն տվեց ներկա դիմումատու Վարդան Սուքիասյանին,ով ներկայացրեց նիստի մասնակիցների դիմում բողոքի էությունը և գործի վերաբերյալ իր փաստաթղթերը:Մասնավորապես դիմումատուն նշեց որ բազմիցս գրավոր և բանավոր տեղեկացրել է կառավարչին որ ինքը հանդիսանում է իր կնոջ՝ պարտապան Նադեժդա Պարոնյանի գույքը հանդիսանում է համատեղ կյանքում ձեռք բերված գույք,բայց կառավարչը միանալով պարտատեր Գեղանուշ Եղյանի հետ և նրա օգտին գույքը իրացրել է և իրեն զրկել են իր բաժնեմաս սեփականությունից:Դիմումատուն հանձնաժողովին ներկայացրեց նաև դիմում-բացատրություն և Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.03.2014թ-ի ԵԷԴ/1188/02/12 վճռի լուսապատճենը ըստ որի դատարանը ճանաչել է իր սեփականության իրավունքը ք.Երևան,Տիգրան Մեծի փող.59/36 հասցեյի տան 1/2 –ի հանդեպ:

Հանձնաժողովի անդամները հարցեր ուղղեցին դիմումատուին և ստացան պատասխաններ:
Հանձնաժողովի նախագահի կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց՝քաղաքացի Նադեժդա Պարոնյանի սնանկության գործով կառավարիչ՝Ժիրայր Արաբյանին,ով ներկայացրեց հանձնաժողովին,որ սույն ԵԷԴ/0093/04/15 սնանկության գործը վարույթ է վերցվել 25.09.2015թ-ին,նույն դատարանի 20.10.2015թ-ի վճռով պարտապանը ճանաչվել է սնանկ,ինքը սնանկության գործով կառավարիչ է նշանակվել դատարանի 02.11.2015թ-ի որոշմամբ:
Պարտապանի հանդեպ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատվել է 10.05.2016թ-ին: Քննարկվող գույքի իրավական վիճակի պարզաբանումներ կատարվել են շուրջ երկու տարի,բայց քանի որ համաձայն դիմումատուի կողմից ներկայացված ԵԷԴ/1188/02/12 վճռի դատարանը ճանաչել է դիմումատուի սեփականության իրավունքը, բայց իր մասով գրավից ազատելու հայցը մերժել է այսինքն անշարժ գույքի վրա պահպանվել է գրավի իրավունքը ամբողջությամբ,ուստի իր կողմից կատարվել է գույքագրում,շուկայական արժեքի գնահատում,գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու ծրագրի քննարկման համար 01.06.2018թ-ին հրավիրվել է պարտատերերի ընդհանուր ժողով և ժողովի արդյունքներով միջնորդություն է ներկայացվել դատարան աճուրդի թույլտվություն ստանալու համար:Դատարանը քննարկել է միջնորդությունը և 20.06.2018թ-ին թույլատրել է գույքի աճուրդային կարգով իրացումը 20 700 000 ՀՀ դրամ մեկնարկային գնով:
Իրկողմից օրենքով սահմանված կարգով համաձայն որոշման կազմակերպվել են աճուրդ վաճառքները և 10.12.2018թ-ին նշանակված արդեն երրորդ անգամ կազմակերպված աճուրդում ապահովված պարտատեր Գեղանուշ Եղյանը հրապարակային սակարկությունների միջոցով գնել է անշարժ գույքը,վճարելով 15 090 300 ՀՀ դրամ:
Սահմանված կարգով անշարժ գույքի առուվաճառքից հետո գույքը հանձնվել է գնորդին:
կառավարիչը ներկայացրեց համապատասխան ապացույցներ և նշեց որ իր կողմից պարտապանի կամ պարտապանի ամուսնու հետ միշտ հարաբերություններում պահվել է կոռեկտություն և իր գործառույթները իրականացվել են օրեններով սահմանված ընթացակարգերով և առանց կարգապահական խախտումների,իսկ դիմումատուի կողմից ներկայացված դիմումը նա ներկայացրել է նաև այլ մարմինների և դատարան,որի վերաբերյալ կան համապատասխան պատասխաններ և որոշումներ:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ կառավարչի կողմից կատարվել են «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 56-րդ և 57-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգերը և միջոցներ է ձեռք առել օրենքի 76-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունների,այն հրապարակային սակարկությունների իրացումը կազմակերպման համար,քանի որ գույքի իրացումը պայմանավորված է եղել գրավի պայմանագրով և ապահովված պահանջատիրոջ պահանջի բավարարում տալու պարտականությունով և օրենքի պահանջով:
Հաշվի առնելով նշվածը,ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և դիմումում շարադրված փաստերը հանձնաժողովի նախագահն առաջարկեց կարճել կարգապահական վարույթը սնանկության գործով կառավարչի կողմից կարգապահական խախտում չկատարելու պատճառաբանությամբ:
Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և առարկությունները,տվեցին և ստացան համապատասխան հարցեր և արդյունքում համաձայնելով նախագահի առաջարկին, քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. 16.08.2019թ-ին քաղաքացի Վարդան Սուքիասյանից ստացված դիմում բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Նադեժդա Պարոնյանի սնանկության գործով կառավարիչ՝Ժիրայր Արաբյան գործողությունների /անգործության/, գործողությունները օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության,սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան